սիլվանիոյ Սկրանտոն քաղաքը 1902 թ. հոկտ. 16-ին՝ որոշեցին.

ա. Նորին սրբութիւն ամենայն Հայոց կաթուղիկոսի գերիշխանութիւնը ճանաչել գլուխ առաքելական եկեղեցւոյ փոխանակ Հռովմի պապի, որի հետ նոցա ամեն կապը լուծուած է վեց տարուց ի վեր։

բ. Աղաչել Ն. Ս. Օ. ամենայն Հայոց կաթուղիկոսին, որ հաճի վերապատուելի Ֆրանսուա Հոդուրին ձեռնադրել եպիսկոպոս պօլօնաց ազգային եկեղեցու Ամերիկայում, (այստեղ բացատրում են իրանց եկեղեցու դաւանութիւնը և աւելացնում են որ իրանց եկեղեցու բոլոր պաշտամունքը պիտի լինի ազգային լեզուով և ոչ լատին բարբառով)։

Եւ փափագում են, որ այսուհետև իրանց եպիսկոպոսները ընտրուեն իրանց քահանաներից և հաւատացեալներից և հաստատուեն ամենայն Հայոց Հայրապետի սուրբ օծմամբ։ Նոցա քահանայք այսուհետև ս. պատարագին կիշատակեն նախ՝ առաքելական եկեղեցու գլուխ ամենայն Հայոց կաթուղիկոսին, երկրորդ՝ իրանց պօլօն եպիսկոպոսին. ի վերայ այսր ամենայնի աշխարհի չորս կողմը սփռուած բոլոր հարստահարուած պօլօնացիներին։

Եւ արդ, գրում են նոքա, լի վստահութեամբ դարձնելով մեր աչքերը առ Ձերդ սրբութիւն՝ խոնարհաբար աղաչում ենք առնուլ մեզ Ձեր հովանու տակ և աջակից լինել մեզ բարոյապէս ձեռնադրելով մեր ընտրած Ֆրանսուա Հոդուրին եպիսկոպոս։

Վերջապէս խոստանում են հաստատուն մնալ ս. դրոց հաւատի և եկեղեցւոյ աւանդութեանց մէջ, որ առաջին դարերից հասել է մեզ, և իրանց կեանքում ցոյց կտան, որ Հայաստանեայց եկեղեցուց ստացած այդ շնորհը ընդունայն չի անցնի։

Մի լաւ դաս պապամոլ Մխիթարեանների համար։

ԿԻԼԻԿԻՈՅ Տ. ՍԱՀԱԿ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՕԾՈՒՄԸ

Ինչպէս արդէն հաղորդել էինք „Լուսոյ"-ի անցեալ համարում, Կիլիկիայի Նորընտիր տ. Սահակ կաթուղիկոսը արդէն մեկնել է ս. Երուսաղէմից դէպի Սիս ս. Օծումն ընդունելու համար։ Լրագիրները հաղորդում են մանրամասնութիւններ Նորին վեհափառութեան փառաւոր ընդունելութեանց մասին դանագան քաղաքներում։ Կաթուղիկոսն արդէն հասել է Սիս, ուր և ընդունուել շքեղ հանդիսով և անցեալ մարտ 29-ին, ծաղկազարդի օրը, նշանակուած էր օծման հանդէսը։ Խմբագրութիւնս պարտք համարեց իւր խնդակցութիւնն յայտնել Տ. Սահակ կաթուղիկոսին՝ Ադանս ուղղուած մի հեռագրով։